ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի.

ք.Գավառ 29 ապրիլի 2022թ.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը եվ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 13-րդ կետի համաձայն սույն թվականի ապրիլի 29-ին ժամը 10:30-ին՝ հետադարձ աճուրդի ներկայացման վերջնաժամկետին, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում տեղի ունեցավ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով (eauction.armeps.am կայք) համակարգի միջոցով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Տ. Հ. Զաքոյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Ս. Բ. Ղարաբաղցյան

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

հ/հ	**Մասնակիցների անվանումները**	**Մասնակիցների ՀՎՀՀ-ները**	**Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեները**	**Մասնակիցների հեռախոսահամարները**
1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	02662703	maxoil.llc@mail.ru	010-52-67-51
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	01808789	flash@flashltd.am	010-53-42-33

Հանձնաժողովը գնահատեց.

1) «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1,
- գնային առաջարկ,
- իրական շահառուների մասին հայտարարագիր,

2) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1 և լիազորագիր՝ ընկերության անունից ընթացակարգին մասնակցելու մասին,
- գնային առաջարկ,
- իրական շահառուների մասին հայտարարագիր:

Գնման առարկայի նախահաշվային գինը՝

Դիզելային վառելիք ամառային, կտրոններով
870.000 /ութ հարյուր յոթանասուն հազար դրամ/

3) Էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում մասնակիցների կողմից նախօրոք ներկայացված գնային առաջարկները չեն փոփոխվել:
4) Էլեկտրոնային աճուրդն ամփոփելու պահին մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափա բա-ժինը	**Գնման առարկայի անվանումը**	**«ՖԼԵԾ» ՍՊԸ** առանց ԱԱՀ-ի	**«ՖԼԵԾ» ՍՊԸ** ներառյալ ԱԱՀ-ը	**«Մաքս Օիլ» ՍՊԸ** առանց ԱԱՀ-ի	**«Մաքս Օիլ» ՍՊԸ** ներառյալ ԱԱՀ-ը
1	Դիզելային վառելիք ամառային, կտրոններով	837.500	1.005.000	811.250	973.500

5) Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
6) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

✓ ընթացակարգը համարել չկայացած՝ ներկայացված հայտերով նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ		Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Տ. Հ. Զաքոյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար		Ս. Բ. Ղարաբաղցյան